# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Յունիքիմ ՍՊԸ-ն ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/61 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | UNIX | Յունիքիմ ՍՊԸ | Բարձր ճնշման, անհպում լվացման մաքրման հեղուկը (ունիվերսալ միջոց, խտանյութ) նախատեսված է հատուկ նշանակության մեքենաների (աղբատար, բեռնատար, ինքնաթափ, աղցան և այլն), դրանց թափքի, ընթացքային դետալների, անիվների և մաքրման համար: Խտացված լվացող միջոցը ներկարարական ծածկույթներին հաղորդում է փայլ և ստեղծում միջավայր՝ հետագա աղտոտվածությունների դյուրին լվացման համար: Նախատեսված բոլոր տեսակի բարձր ճնշման սարքավորումներով աշխատող պորտալ, ռոբոտ և ինքնասպասարկվող լվացման սարքերի համար: Հեշտությամբ հեռացնում է կեղտը, խիստ յուղային, ճարպային և միներալ աղտոտվածությունները: Չի թողնում բծեր, հետքեր և չի վնասում լվացվող մակերեսները: Պարունակում է կենսաբանորեն քայքայվող մակերևութային ակտիվ նյութեր: Չի պարունակում նատրիումի նիտրիլտրիացետրատ, սիլիկոն և նպաստում է պոմպերի և բարձր ճնշման սարքերի արդյունավետ աշխատանքին: Արդյունավետ է նաև ջրի ջեռուցմամբ բարձր ճնշման սարքավորումներով օգտագործելու համար: |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Ապահովվում է յուղոտ մակերեսների մաքրումը: Անվտանգ է շրջակա միջավայրի և մարդկանց համար: Անվտանգ է տրանսպորտային միջոցի ներկածածկույթի համար, չի վնասում լաքածածկույթը և մակերեսը: Այն ունի բարձր փրփրակալելու հատկություն: Ջրի պարունակությունը 63-65%, pH մակարդակը 13.5-14, մածուցիկությունը` 20-50 mPa·s: Պահպանման պայմանները` 0 °C-ից մինչև + 30 °C: Բարձր ճնշման դոզացիոն համակարգերով հեղուկի պարունակությունը ապարատով աշխատում է 40-60 %, իսկ խտանյութը (пенокомплект) նոսրացվում է 1:8 – 1:10, փրփուրի բալոնում (пеногенератор) 1:100 – 1:120 համամասնությամբ: Պետք է լինի գործարանային արտադրանք և տվյալ խբաքանակը արտադրողի կողմից անցի լաբորատոր փորձաքննություն: Մատակարարման ժամանակ մատակարարը ներկայացնում է` լաբորատաոր փորձաքնության եզրակացություն և առաջարկվող ապրանքի արտադրողի (MAF-Manufacturer's Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF-Distributer's Authorization Form) նամակ-լիազորագիր, ինչպես նաև համապատասխանության սերտիֆիկատ կամ հայտարարագիր: Փաթեթավորումը` 20-30կգ պոլիէթիլային կամ պոլիմերային գործարանային տարրաներով` պիտակավորված: Տարան պիտակավորված է: Պիտակին նշվում է տեսակի անվանումը, տեխնիկական պայմանի համարը, պահպանման ժամկետի, արտադրող կազմակերպության, արտադրման ժամկետի վերաբերյալ տեղեկատվություն: Պահպանման երաշխիքային ժամկետը թողարկման օրվանից առնվազն 36 ամիս: Ապրանքի տեխնիկական պայմանների ակնհայտ անհամապատասխանության առկայության դեպքում, պատվիրատուի ներկայացուցչի կողմից պատահական ընտրությամբ ընդհանուր խմբաքանակից կվերցվի ապրանքանմուշ իր միջոցների հաշվին պետք է ենթարկի ՀՀ պետական փորձաքննության և Պատվիրատուին ներկայացնի փորձագիտական եզրակացություն` առաջարկվող ապրանքը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ: Սույն կետով նշված ՀՀ պետական փորձաքննություն չիրականացնելը, կամ առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ եզրակացությունը Պատվիրատուին չտրամադրելը, կամ եթե տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է անհամապատասխանություն վերոհիշյալ տեխնիկական բնութագրին, ապա Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ապրանքից: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Юнихим в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/61 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | |